

ԹԻԻ 21



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1908—9 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱԿԱԴՄԻԱՅԻՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԻԱ.

22 Մայիս 1909



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Թ. ԱՍՏՆՈՒՐԵԱՆ ԷՆ ՈՐԴԻՔ

1909



# ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1908 — 9 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

## ՄԱՅՐ ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ

|             |                |             |           |                 |             |
|-------------|----------------|-------------|-----------|-----------------|-------------|
| Մինաս       | եփ. Ջերագ      | Ա. Ասեմապետ | Հրան      | եփ. Ասատուր     | Ա. Ասեմապետ |
| Տօփ. Վահրամ | » Թորգոմեան Բ. | »           | Հայկ      | » Խոնասարեան Բ. | »           |
| Դեռզ        | » Աստուան Գ.   | »           | Յովհաննէս | » Հինգեան Գ.    | »           |

## ՆԱԽԱԳԱՀ ԴԻՒԱՆԲ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ

| ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                   |                          |                       | ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                    |                        |  |
|---------------------------------------|--------------------------|-----------------------|----------------------------------------|------------------------|--|
| Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաֆեան (Ասեմապետ) | Վահան                    | եփ. Էսաեան (Ասեմապետ) | Տօփ. Կարապետ                           | » Մուրաֆե. (Ասեմապետ)  |  |
| Լեւոն                                 | եփ. Սաաքեան              |                       | Յովհաննէս                              | » Խազուդեան            |  |
| Նշան                                  | » Ճիվանեան               |                       |                                        |                        |  |
| ԴԱՍԵՒԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                 |                          |                       | ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                     |                        |  |
| Յովհաննէս                             | եփ. Հինգեան (Ասեմապետ)   |                       | Տ. Մաղաֆիա Եպիսկ. Տերունեան (Ասեմապետ) |                        |  |
| Ռուբեն                                | » Զարդարեան (Ասեմապետ)   |                       | Ռուբեն                                 | եփ. Փափազեան           |  |
| Յովսէփ                                | » Դույրումեան            |                       | Ասեփան                                 | » Կուրսիկեան           |  |
| ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ                       |                          |                       | ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                   |                        |  |
| Վառլապուհ                             | եփ. Մանուկեան (Ասեմապետ) |                       | Հմայեակ                                | եփ. Արամեան (Ասեմապետ) |  |
| Արիսակես                              | » Դասապարեան (Ասեմապետ)  |                       | Խնդիր                                  | » Սիմոնեան (Ասեմապետ)  |  |
| Արամ                                  | » Հալանեան               |                       | Յակոբ                                  | » Պահրի                |  |
| ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                 |                          |                       | ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ                     |                        |  |
| Օննիկ                                 | եփ. Տերունեան (Ասեմապետ) |                       | Բիզանդ                                 | եփ. Բեյեան (Ասեմապետ)  |  |
| Բիզանդ                                | » Պօզանեան               |                       | Հայկ                                   | » Խոնասարեան           |  |
| Խորեն                                 | » Ճամեան                 |                       | Մեյֆոն                                 | » Կիւրճեան             |  |

## ՆԼԵՒՄՏԻՑ ՅԱՆՋՆԱՌՈՒՄԲ

|          |                           |
|----------|---------------------------|
| Արիսակես | եփ. Դասապարեան (Ասեմապետ) |
| Ղազարոս  | » Չալազեան (Ասեմապետ)     |
| Պարզե    | » Փափազեան (Գանձապետ)     |
| Օննիկ    | » Տերունեան (Մասակարար)   |

## Ն Ի Ս Տ Ի Ա.

ՈՒՐԲԱԹ, 22 ՄԱՅԻՍ 1909

( Ի ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ )

ՆԱԽԱԳԱՀ. — ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀ Տ. ՅՈՎՀ. ԵՊԻՍԿ. ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՄԻՆԱՍ ԷՅԵՆՏԻ ՉԵՐԱԶ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. — Ընտրութիւն Կ. Պոլսոյ Պատրիարքի :
2. — Տեղեկագիր Երուսաղեմի հաւուոց Քննիչ Խորհրդարանական Յանձնաժողովոյ :
3. — Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանին՝ Թրքահայոց բաղձանքները Ս. Հայրապետին ներկայացնող գրի մասին :
4. — Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանին՝ Օսմ. Խորհրդարանին մատուցանելի Յիւսէֆի գրի մասին :
5. — Ընտրութիւն՝ Կրօն. ժողովոյ երկու անդամոց :
6. — Ընտրութիւն երեք անդամոց՝ նախորդ Պատրիարքին դէմ եղած ամբասանութեանց Քննիչ Յանձնաժողովոյ :
7. — Ազգային Կեդրոնական վարժարանի խնդիր :

## ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՑ

Պատրիարքական ընտրութեան նուիրումն առնելու համար տեղի ունեցաւ Մայր Եկեղեցւոյ մէջ, ինչպէս կը տրամադրէ Ազգային Սահմանադրութիւնը, նախագահութեամբ Պատր. Տեղապահ Տ. Արշարունի Սրբազանի։ Ատենապետ Չերազ Էֆէնտի առեանք բացաւ ժամը 7ին, ի ներկայութեան 72 երեսփոխանաց, որոնց թիւն ի վերջոյ յանգեցաւ 91ի։ Նիստը դռնփակ էր։

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մեր պաշտօնակիցներէն Յովսէփ Էֆ. Գուրումեան բանաւոր պատճառով բացակայութիւնը հաղորդած ըլլալով զբաւորապէս, ըստ այնմ կ'արձանագրուի։ Այսօրուան առեանական գործողութեանց մէջ ունինք, նախեալ առաջ, երեսփոխանական եօթը նոր ընտրութեանց տեղեկագիրը զոր յղած է Քաղ. ժողովը։ Կը հրաւիրեմ Ատենապետին Էֆ. Կարապալ ալ պաշտօնագիրը։



Վսեմաշուք Ատենապետ էֆենտի  
Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ

Մայրաքաղաքի Սկիւտար Սելամիոյ Թա-  
ղէն և Բաբերդի, Տիվրիկի, Մուշի, Վանայ,  
Ինչպէս նաեւ Մարաշ-Ջէյթունի և Հալէպ-  
Այնթապի միացեալ վիճակներուն կողմէ Երես-  
փոխանական ընտրութիւնք կատարուած և  
ղրկուած են տեղեկագիրներն, որոնցմէ կը  
յայտնուի թէ՛ Ազգային Երեսփոխան ընտ-  
րուած են,

Ա. — Սկիւտար Սելամիոյ Թաղէն՝

1. — Վարդգէս էֆ. Սերենկիւլեան
2. — Վահան » Փափազեան

Բ. — Բաբերդի վիճակէն՝

3. — Երուանդ էֆ. Սրմաքէշլիանլեան

Դ. — Տիվրիկի վիճակէն՝

4. — Սալաւաթ Էֆ. Ենթէլէկեան

Դ. — Մուշի վիճակէն՝

5. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան

Ե. — Վանայ վիճակէն՝

6. — Վահան էֆ. Փափազեան

Ձ. — Մարաշ-Ջէյթունի միացեալ վի-  
ճակներէն՝

7. — Սմբատ էֆ. Բիւրատ Տ. Ղազարեան

Է. — Հալէպ-Այնթապի միացեալ վիճակ-  
ներէն՝

8. — Արտաշէս էֆ. Յնտզլեան

Ազգային Կեդր. Վարչութեան Քաղա-  
քական Ժողովը Սահմանադրութեան 81րդ  
յօդուածին համաձայն քննելով այս տեղե-  
կագրերն, նոյն Պատուարժան Երեսփոխանաց  
ընտրութեան պայմաններն ստուգած և ըստ  
ամենայնի համաձայն գտած ըլլալով Ազգա-  
յին Սահմանադրութեան տրամադրութեանց,  
ներփակեալ կը ներկայացնէ ընտրական տե-  
ղեկագրերն, և այս առթիւ դիտել կուտայ  
թէ Վահան էֆ. Փափազեան միեւնոյն ատեն  
Երեսփոխան ընտրուած է թէ՛ Սկիւտարի Սե-  
լամիոյ Թաղէն և թէ՛ Վանայ վիճակին կող-  
մէ, և կը յանձնէ Պատկ. Ժողովոյդ, Սահ-  
մանադրութեան 83րդ յօդուածին համաձայն  
ի գործ դնել այս մասին պարտաւարտաճը:

Մնամք յարգանք  
Ի դիմաց Քաղ. Ժողովոյ

Ասեմադպիր Ասեմապետ  
Յ. ԵՌԻՍՏԻՅԱՆ Ս. ԳՐԱՍԵԱՆ

13 մայիս 1909

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նորընտիր Երես-  
փոխաններէն Վահան էֆ. Փափազեան երկու  
տեղէ միանգամայն ընտրուած ըլլալով, իր  
նախագատուութիւնը Վանայ տուած է՝ հե-  
տեւեալ նամակով:

Գեր. Յովհ. Եպիսկ. Պատր. Տեղ. եւ  
Նախագահ Կեդր. Ազգ. Երեսփ. Ժողովի  
Կ. Պոլիս

Ստացայ թէեւ 12 մայիսի թուականով  
դռնփակ Ազգ. Երեսփ. Ժողովի հրաւեր-  
րակարգը, սակայն ենթադրելով, որ իբրեւ  
Իսկիւտարի կողմէն ընտրուած Երեսփոխան  
կը հրաւիրէք զիս, հարկ կը համարիմ անմի-  
ջպէս յայտնել որ Վանէն Ազգ. Երեսփոխան  
ընտրուած լինելու համար՝ գերադաս կը հա-  
մարիմ վերջինը ընդունիլ:

Արդ, այս գրութիւնը կը խնդրէի հա-  
մարել հրաժարական Իսկիւտարի Ազգ. Ե-  
րեսփոխանութենէ և ընտրուած՝ Ազգ. Երես-  
փոխան Վանայ, Այդ առթիւ կըստեսեմ վա-  
ւերացմանս:

Յարգանքներով  
ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

13 մայիս 1909, Բերա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հետեւաբար, Սկիւ-  
տար Սելամիոյ Թաղին հրահանգ պիտի տրը-  
ուի նոր ընտրութիւն կատարուելու համար՝  
Ինչպէս կը տեսնէք, Վարչութիւնը հաս-  
տատած է կատարուած Երեսփոխանական  
ընտրութեանց օրինաւորութիւնը. ուստի Ժո-  
ղովիդ վաւերացման կենթարկեմ. անոնք որ  
կընդունին՝ հաճին յայտնել իրենց ձեռամբարձ  
հաւանութիւնը:

(Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց  
կատարուած ընտրութիւնները և Ատենապետ  
էֆ. ն Երեսփոխան հռչակելով ընտրեալները  
որոնք ներկայ էին նիստին, հրաւիրեց և  
նոնք ստորագրել ներկայութեան տոմարը  
մասնակցի Պատրիարքական ընտրութեան  
քուէարկութեան):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս աշխարհական  
Երեսփոխաններէն զատ՝ կատարուած է երեք  
եկեղեցական Երեսփոխաններու ընտրութիւն  
որոնց տեղեկագիրը Դիւանիս յանձնուած է  
եկեղեցականաց Ընդհ. Ժողովոյ կողմէ: Ահա  
ւստիկ այդ պաշտօնագիրը. —

Բարձրաշնորհ

Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի  
Պատր. Տեղապահ և Նախագահ Ազգային  
Ընդհանուր Ժողովոյ

Կ. Պոլիս

Ձեր Բ. Սրբազնութեան հրաւիրանաց  
համաձայն Մայրաքաղաքի Եկեղեցականաց  
Ընդհ. Ժողովը՝ Ազգ. Սահմանադրութեան  
63րդ յօդուածին տրամադրութեան համա-  
ձայն՝ այսօր իր է.րդ նիստը գումարելով  
Ազգ. Պատրիարքարանի մէջ, կատարեց երեք  
պակասեալ եկեղեցական երեսփոխանաց ընտ-  
րութիւնը:

Հրաւիրեալ 136 եկեղեցականներէն 22ը  
նամակաւ և 68ը անձամբ մասնակցելով,  
քաղանի քուէարկութիւն կատարուեցաւ ընդ-  
հակողութեամբ Կեդր. Կրօն. Ժողովոյ կող-  
մանէ կարգեալ Մասնախումբին. առաջին  
քաղանի քուէարկութեան արդիւնքը եղաւ  
հետեւեալը.

- |                                |                     |    |
|--------------------------------|---------------------|----|
| 1. Տ. Վահան                    | Ծ. Վրդ. Տ. Մինասեան | 34 |
| 2. » Մաղաքիա Ս. Եպս. Տէրունեան |                     | 33 |
| 3. » Ներշէ                     | Ծ. Վրդ. Զիլինկիրեան | 32 |
| 4. » Ղեւոնդ                    | » » Դուրեան         | 24 |
| 5. » Վահան                     | » » Յակոբեան        | 22 |
| 6. » Անանիա                    | » » Հաղարապետ       | 20 |

Վերոյիշեալները համեմատական մնա-  
ցած լինելով, կրկին քաղանի քուէարկու-  
թիւն կատարուեցաւ և հետեւեալ վերջնական  
արդիւնքը գոյացաւ.

- |                                |                 |    |
|--------------------------------|-----------------|----|
| 1. Տ. Ղեւոնդ                   | Ծ. Վրդ. Դուրեան | 41 |
| 2. » Վահան                     | » » Տ. Մինասեան | 27 |
| 3. » Մաղաքիա Ս. Եպս. Տէրունեան |                 | 26 |

Ըստ այսմ՝ համեմատական ընտրութեան  
քուէից առաւելութեամբ եկեղեցական երես-  
փոխան ընտրուած են՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ.  
Դուրեան՝ 41 քուէով, Տ. Վահան Ծ. Վրդ.  
Տ. Մինասեան՝ 27 քուէով, և Տ. Մաղա-  
քիա Ս. Եպս. Տէրունեան՝ 26 քուէով:

Եկեղեց. Համագումար Ժողովն ալ գու-  
մարուեցաւ այսօր, և Ազգ. Սահմանադրու-  
թեան Բ. յօդուածին տրամադրութեան հա-  
մաձայն թէեւ կը փափաքէր՝ ըստ առաջարկի  
Ազգ. Ժողովոյ՝ Պատր. ընտրելի եպիսկոպոս-  
ներու ցանկը պատրաստել, սակայն Համա-  
գումար Ժողովն իր նստին մեծագոյն մասին  
մէջ Ատանայի և Հալէպի կուսակալութեանց  
մէջ պատահած անուելի դէպքերը ուշադրու-

թեան ու խորհրդածութեան առարկայ ընե-  
լով, և միանգամայն 3 եկեղ. երեսփոխան-  
ներու ընտրութեամբ զբաղելով, և 45 ան-  
դամներէն 22 հոգի մնացած ըլլալով, հարկ  
համարեց յառաջիկայ Դշ. պատրաստել Պատր.  
ընտրելեաց ցանկը:

Չայս կը յայտարարեմք Ձեր Բ. Սրբազ-  
նութեան Ազգ. Ժողովոյ հաղորդելու համար:

Ի դիմաց Եկեղեց. Ընդհ. Ժողովոյ

Ասեմադպիր Ասեմապետ  
ԳՐ. ՎՐԴ. ՊԱՆԱԳԵԱՆ ՄՍ. ԵՊԻՍԿ. ԴԻՄԱՔՍԵԱՆ  
10 մայիս 1909

Կ. ՔԵՐԵՍԵՏԷՃԵԱՆ ԷՖ. — Պէտք է  
քննուի այս տեղեկագիրը, վասն զի ընտր-  
եալներէն Վահան վարդապետ Տէր Մինաս-  
եանի վրայ ամբաստանութիւն կը ծանրանայ  
իրբեւ խափիկ:

Յ. ԱԳԻԼԵԱՆ ԷՖ. — Վահան վարդա-  
պետ հմուտ և գրչի տէր եկեղեցական մը ըլ-  
լալէ զատ, ազգային կեանքի ալ ծանօթ է.  
իր երիտասարդութեանը բաներ մը ըրած է,  
կըսեն, բայց հիմայ ծերացած է ու իր եր-  
բեմնի գինովութենէն հրաժարած: Նախամե-  
ծար կը համարիմ որ ընդունինք զինքը և  
օգտուինք իր փորձառութենէն:

Յ. ՇԱՀԻՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ազգ. Վար-  
չութիւնը լրագրական հրատարակութիւններէ  
տեղեկանալով որ երեք եկեղեցականներ Ազգ.  
Երեսփ. Ժողովոյ անդամ ընտրուած են, և  
նախանձախնդիր ըլլալով Սահմանադրութեան  
տրամադրութեանց ճշդիւ գործադրութեան,  
ուղեց մօտէն տեղեկանալ անոնց երեսփոխան  
կարենալ ըլլալու հանգամանքին և այն եզ-  
րակացութեան յանգեցաւ թէ Համագումար-  
ին կատարած ընտրութիւնը յանձին Վահան  
վարդապետի չհամապատասխաներ Օրէնքին  
տառին և ոգւոյն որոնք կը տրամադրեն ընտ-  
րել այնպիսի հոգեւորականներ որոնք ոչ մէկ  
Ժողովը՝ իրաց առեալ իր մէկ անդամը՝ այն  
եղրակացութեան եկաւ որ Վահան վրդ. Տէր  
Մինասեան, թէեւ ի պաշտօնէ դատաւարա-  
ւած չէ, բայց անցեալին մէջ իբր օստիկա-  
ւած չէ, նախանձախնայ ծանցուած է,  
և պէտք էր մինչեւ ցարդ վտարուած ըլլար  
Հայ եկեղեցականութեան շարքէն: Ուստի կը  
պահանջէ որ բեկանուի Վահան վրդ. ի երես-  
փոխանական ընտրութիւնը:



Տ. ՀԱՍՏԵՆՍԿ ԵՊԻՍԿ. — Խառն ժողովը չէ՛ այդ պահանջումն ընդդր, այլ Գաղափարական ժողովը:

ՎԱՐԴԳԻՅՍ ԷՖ. — Վահան վարդապետի 30 տարի է ի վեր անցուցած կեանքին վրայ բնա՛ւ երբեք լաւ տեղեկութիւն մը չունիմ. ինքը սխալմամբ վարդապետ եղած է և իր անդամակցութիւնը անպատուութիւն պիտի բերէ այս ժողովիս: Ես կառավարեմ որ առանց երկար բարակ վիճաբանելու, բեկանք իր ընտրութիւնը:

Ն. ՃԻՎԱՆԵԱՆ ԷՖ. — Իր անցեալը հազար հոգիով կը վկայուի:

ՁԱՅՆԵՐ. — Բուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն անոնք որ Վահան վարդ. Տէր-Մինասեանի ընտրութիւնը բեկանելու կողմն են, թո՛ղ հաճին վեր առնել ձեռքերին:

(Ժողովը 47 քուէներով որոշեց բեկանել Վահան վարդապետի երեսփոխանական ընտրութիւնը):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վահան վարդ. ի ընտրութիւնը բեկանուեցաւ: Հիմայ անոնք որ կը հաւանին Տ. Մաղաքիա եպիսկ. Տէրունեանի և Տ. Ղեւոնդ Մ. վարդ. Դուրեանի երեսփոխանական ընտրութեան, թո՛ղ հաճին ձեռամբարձ յայտնել իրենց հաւանութիւնը:

(Ժողովը միաձայնութեամբ հաստատեց սոյն ընտրութիւնը և Ատենապետ էֆ. երեսփոխան հռչակեց յիշեալ երկու եկեղեցականները որոնք եկան բազմիւ իրենց աթոռը):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեարք երեսփոխանք, հիմայ որ ժողովդ իր որոշումը տուաւ այս երեսփոխանական ընտրութեանց մասին, պէտք է դադարեցնենք ատենական գործողութիւնները և անմիջապէս անցնինք Օրակարգի Ա. խնդրոյն, որ է Պատրիարքական ընտրութիւն:

ՁԱՅՆԵՐ. — Անտարակոյս:

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՖ. — Տեա՛ք երեսփոխանք, մեր այսօրուան ձեռնարկել ուղածը Պատրիարքական ընտրութիւնն է. սակայն հապճեպի պատճառ չունինք և ես համարիտ չեմ որ անձուկ չըջանի մը մէջ և առաջարկեմքով կատարուի ընտրութիւնը, այլ աւելի հիմնաւոր ուսումնասիրութեամբ և

հասուն խորհրդակցութեամբ, որպէս զի պատասխանատու չի մնանք մեր խղճին առջեւ...

ՁԱՅՆԵՐ. — Աւարտեցէ՛ք:

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՖ. — Ըսել կուզեմ թէ կանխաւ պէտք է համաձայնինք յարմարագոյն ընտրելի մը նկատմամբ...

ՁԱՅՆԵՐ. — Ձեռք կրնար լսել, Օրակարգին անցնինք:

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՖ. — Կը բողոքեմ այս ընդմիջումներուն դէմ որոնք խօսքի աղատութիւնը կը բռնաբարեն: Այս դիտողութիւնս պէ՛տք է արձանագրուի:

ԱՐՏ. ՅՆՏԳԼԵԱՆ ԷՖ. — Պատրիարքական ընտրութիւնը անակնկալ մը չէ մեզի համար. այսօր այդ նպատակաւ եկած ենք և պէ՛տք է կատարենք ընտրութիւնը որ Օրակարգին գլուխը կը գտնուի:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Ես ալ կը յիշեցնեմ Մանուկեան էֆ. ի որ, վերջին նիստին մէջ մեր մատուցած մէկ գրոյն վրայ Պատկ. Ժողովդ որոշած էր փութացնել Պատրիարքական ընտրութիւնը, հետեւաբար հիմա անտեղի է յետաձգում առաջարկել: Այս առաջարկը պէտք էր ընել նոյն նիստին մէջ եթէ բանաւոր պատճառաւ մը կար, ինչ որ գոյութիւն չունի. ուստի անցնինք ընտրութեան գործին:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Վարչութեան կողմէ ստիպողական պաշտօնագիր մը յանձնուած էր Դիւանին: Կուզէի գիտնալ թէ ինչո՞ւ Օրակարգին մէջ չէ անցած:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրէնք է որ որեւէ պաշտօնագիր նախ կարդացուի իր կարգին և ժողովին որոշմամբ անցնի Օրակարգ:



## ՕՐԱԿԱՐԳ

1.

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բանի որ նախորդ նիստին որոշուեցաւ որ ժողովիս այսօրուան Օրակարգի առաջին խնդրին ըլլայ Պատրիարքական ընտրութիւնը, և Համագումար ժողովն ու Գաղափարական ժողովը բերած են իրենց տեղեկագիրն ու ընտրելեաց ցանկերը:

ԸՆՏՐԵԼԵԱՅ ՅԱՆԿ  
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Երեսփոխանական Ընդհ. Ժողովոյ Կ. Պոլսոյ Պատրիարքի ընտրութեան համար՝ Ազգային Վարչութեան Գաղափարական ժողովն՝ ըստ Եկեղեցական Համագումար ժողովոյ պատրաստած Պատրիարքական Ընտրելեաց ցուցակին՝ որ հաղորդուած էր իրեն Գեր. Տեղապահ Սրբազան Հօր միջոցաւ, նոյն ցուցակին մէջէն զաղտնի քուէարկութեամբ հինգ ընտրելի որոշեց, ըստ տրամադրութեան շրջ յօդուածոյ Ազգ. Սահմանադրութեան, և հաւաքօրէն ընդ գրոյս Պատկ. Ժողովոյ կը ներկայացնէ թէ՛ հնգանուն և թէ՛ Եկեղեցական Համագումար ժողովոյ կրկին ցուցակները, տնօրինելու համար զոր ինչ արժան է ըստ օրինաց:

Մնամք յարգանք

Ի դիմաց Գաղափարական ժողովոյ

Ասեմադպիր Ասեմապետ

Յ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Ս. ԳԱՐԱԵԱՆ

22 մայիս 1909

ՅՈՒՅԱԿ ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԵԱՅ

Պատրաստեալ ի Գաղափարական ժողովոյ

Ազգ. Կեդր. Վարչութեան

1. Տ. Եղիշէ Ս. Եպիսկ. Դուրեան 24  
2. » Հմայեակ » » Դիմաքսեան 20  
3. » Յովհաննէս » » Արշարունի 17  
4. » Ստեփաննոս » Արքեպ. Յովակիմեան 13  
5. » Տրդատ » Եպիսկ. Պալեան 12  
6. » Դէորդ » Արքեպ. Երէցեան 9  
7. » Մաղաքիա » Եպիսկ. Տէրունեան 6  
8. » Գրիգորիա » Արքեպ. Յովհաննէս 5  
9. » Վահրամ » » Մանկունի 5  
10. » Դաբրիէլ » Եպիսկ. Զէվա՛հրճեան 4  
11. » Ստեփաննոս » » Սանտալճեան 2  
12. » Եղնիկ » Արքեպ. Ապահունի 2  
13. » Մովսէս » Եպիսկ. Կէօմբիւքճեան 2  
14. » Արիստակէս » » Վանքեան 2  
15. » Տիմոթէոս » » Սափրիչեան 1

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Կենսական կարեւորութիւն ունի սա պարագան, թէ թըրքահայոց Ազգային ժողովը նկատի ունենալու է Եկեղեցական Համագումար ժողովին Պատրիարքական ընտրելեաց ցանկ պատրաստելու եղանակը: Ազգ. Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ այն հոգեւորականները միայն կրնան Պատրիարքական ընտրելի ըլլալ որոնք, ըստ Եկեղեցականութեան, որ և է արգելք չունենան, մինչդեռ այս անգամ մեզ ներկայացուած ցանկին մէջ անուն մը մտած է որ՝ Ազգ. ժողովոյ կողմէ ամբաստանուած և երեսփոխանական ընտրութիւնը բեկանուած է: (Մալիանաուրիւններ):

Իսկոյն պիտի ձեռնարկենք քուէարկութեան, Կը հրաւիրեմ Ատենապետ էֆէնտին կարգաւ այդ երկու պաշտօնագիրները:

(Ատենապետ էֆ. Ասատուր կը կարգաւ հետեւեալ պաշտօնագիրները):

ԸՆՏՐԵԼԵԱՅ ՅԱՆԿ

ԵԿԵԼԵՅԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՈՅ

Բարձրաշնորհ Պատր. Տեղապահ Սրբազան Նախագահ Եկեղ. Համագումար ժողովոյ Ազգ. Սահմանադրութեան երկրորդ յօդուածին տրամադրութեան համեմատ, Ձեր Բարձր Սրբազնութեան պաշտօնագիրով հրաւիրուած Եկեղեցական Համագումար ժողովը Գումարուեցաւ այսօր Ազգ. Պատրիարքարանի մէջ ի պատրաստութիւն Պատրիարքական ընտրելեաց ցանկին:

Հրաւիրեալ 48 եկեղեցական հայրերէն երեսունը ներկայ լինելով՝ մասնակցեցան Գաղտնի քուէարկութեան:

Յետ քուէարկութեան, ժողովը կատարեց քուէահամարի գործողութիւնը, և ըստ վկայութեան ժողովոյ կողմէ կարգեալ քընդիւններու, ունեցաւ հետեւեալ արդիւնքը:

1. Տ. Եղիշէ Ս. Եպիսկ. Դուրեան 24  
2. » Հմայեակ » » Դիմաքսեան 20  
3. » Յովհաննէս » » Արշարունի 17  
4. » Ստեփաննոս » Արքեպ. Յովակիմեան 13  
5. » Տրդատ » Եպիսկ. Պալեան 12  
6. » Դէորդ » Արքեպ. Երէցեան 9  
7. » Մաղաքիա » Եպիսկ. Տէրունեան 6  
8. » Գրիգորիա » Արքեպ. Յովհաննէս 5  
9. » Վահրամ » » Մանկունի 5  
10. » Դաբրիէլ » Եպիսկ. Զէվա՛հրճեան 4  
11. » Ստեփաննոս » » Սանտալճեան 2  
12. » Եղնիկ » Արքեպ. Ապահունի 2  
13. » Մովսէս » Եպիսկ. Կէօմբիւքճեան 2  
14. » Արիստակէս » » Վանքեան 2  
15. » Տիմոթէոս » » Սափրիչեան 1

Ձայս հաղորդելով Ձեր Բարձր Սրբազնութեան՝ իրրեւ Ազգ. Ընդհ. Ժողովոյ Նախագահի,

Մնամք յարգանք

Ի դիմաց Եկեղ. Համագումար ժողովոյ  
Ասեմադպիր Ասեմապետ  
ՍՈՒՔԻՍ ՔԷ. ՊՍԼԵԳՃԵԱՆ Մ. ԵՊԻՍԿ. ՏԵՐՈՒՆԵԱՆ  
20 մայիս 1909



Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Երեցեան Սըրբազանի անունն է այն: Պէտք է շնջել այդ անունը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անոնք որ չեն ուզեր քուէ տալ այսինչ կամ այնինչ եկեղեցականին, չեն տար:

(Այս յայտարարութեամբ՝ Ատենապետ էֆէնտի հրաւիրեց ներկայ երեսփոխանները պատրաստելու իրենց քուէները, և քուէհամարի քննիչ նշանակեց վիճակաւ. —

Եկեղեցական երեսփոխաններէն

- |            |         |           |
|------------|---------|-----------|
| Տ. Մաղաքիա | Եպիսկ.  | Տէրունեան |
| » Տրդատ    | Ջահանայ | Պոյաճեան  |
| » Վահան    | »       | Խոյեան    |
| » Սուքիաս  | »       | Պալըզճեան |

Աւխարհական երեսփոխաններէն՝

- |             |     |           |
|-------------|-----|-----------|
| Երուանդ     | էֆ. | Գարեան    |
| Միսաք       | »   | Գօլունեան |
| Ստեփան      | »   | Թէլլիեան  |
| Տօքթ. Սիմոն | »   | Սեղբոսեան |

Դուհամարը կատարուեցաւ անուանական կոչով և բոլոր երեսփոխանները բերին քուէտուփին մէջ ձգեցին իրենց քուէները:

Ներկայ երեսփոխաններուն թիւն էր՝ իննըսունը մէկ:

Գուէհամարի արդիւնքը եղաւ հետեւեալը. —

|             | Գուէ              |
|-------------|-------------------|
| Տ. Եղիշէ    | Եպիսկ. Դուրեան 54 |
| » Յովհաննէս | » Արշարունի 30    |
| » Հմայեակ   | » Դիմաքսեան 3     |
| » Գէորգ     | » Երեցեան 1       |
| Սպիտակ քուէ | 3                 |
|             | 91                |

Հետեւաբար, Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ, Ազգային Ժողովոյ մեծամասնութեան քուէով,

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Տ. ԵՂԻՇԷ Ա. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ

( Պատրիարքական ընտրութեան արդիւնքը ջերմազին ծափահարութիւններով ու «կեցցէ» ներով ծափահարուեցաւ բովանդակ երեսփոխաններուն կողմէ ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեա՛րք Երեսփոխանք, ինչպէս տեսաք քուէարկութեան արդիւնքէն, իզմիրի Առաջնորդ Դուրեան Սըրբազան ընտրուած է Պատրիարք Կ. Պոլսոյ Այժմ մեզ կը մնայ կատարել երկու ձեւակերպութիւն. նախ ստորագրել ընտրական Մաղապթան որ պիտի մատուցուի Բ. Դրան Պատրիարքական ընտրութեան օրինաւորապէս կատարուած ըլլալը ծանուցանելու համար կառավարութեան:

( Մաղապթան պատրաստուած ըլլալով, կարդացուեցաւ թուրքերէն Դիւանապետի օգնական Միւսուն Էֆ. Չաքարեանի կողմէ և բոլոր երեսփոխանք ստորագրեցին զայն ):

Մաղապթաի Ինքիսպալիյէ

Միւնհալլ օլան Տէրիսաաաթէթ Էրմէնի Բաթրիքլիկինէ մինասիպ պիր զաթըն ինթիխապը՝ Բաթրիքլիսանէ Մէճլիսի ումումիսինին Երկիրմիննի ինիգաաթնտա գարարաշաղըրըլ ըր յիսար իլէ, իշպու պին իւշ Երկ Երկիրմինի պէշ սէնէսի շէհրը Մայըսըն Երկիրմինի Իթիննի շումաա կիւնի Բաթրիքլիսանէ Գիլիսէսինտէ Բաթրիք Գաթմէզամը Բիւթպէթլու Սէր-Եպիսկոպոս Արշարունի Օհաննէս էֆէնտինին պիսկոպոս Սրշարունի Օհաննէս էֆէնտինին թանթըր Բիսաաթթինտէ ինիգաաթ իտէն Մէճլիսի Ումումիսին Երկիրմինի պիրմիննի Իթթիսալընտա ումում միլլէթին էմինիլէթ վէ Իթթիսալընտա մաղհար օլմագ իւզըէ, մագամը մէզ քիւրէ լաեդը օլմագ էվսաֆ վէ հայսիլէթլէ միւթթաաթ, վէ մին էլ գաաթիմ բաթրիքլիկէ մախսուս Եպիսկոպոսար օընըֆընտան վէ Տէվլէթը Ալիլէնին տախի էմինիլէթը քեւա միլէսիննէ շահան զէվսաթտէն, վէ բէտէրլէրինտէն պէրու թէպաաի Տէվլէթը Ալիլէտէն վէ օթուզ պէշ Եաշընը թէքմիլ իթմիլ օլան Եպիսկոպոսարըն՝ Նիզամիսմէի Մախսուսըն իթիննի մաաաթսինին 2իննի, վէ 3իննի, վէ 4իննի, վէ 5իննի ֆըգրալարը իգթիգաաթնա, Բուհանի վէ շիսմանի մէճլիսլէրի թաֆլարընտան թանգիմ օլունան էսամիլի

տէֆթէրլէրի նաղարը թէտգիգտէն կէշիլիլէրէք, էմըր ինթիխապա պիլ իպթիտար՝ աղայի մէվճուտէնին ըէյը խաֆիլէրի նէթիճէսինտէ՝ իզմիր Մէրիսաաաթ Սէր Եպիսկոպոս Դուրեան Եղիշէ էֆէնտի Հազըթլէրի՝ էքսէրլէթը արա իլէ Տէրիսաաաթէթ Էրմէնի Բաթրիքլիկինէ ինթիխապ օլունումալ օլտուղունու միւպէյնին, իշպու մագապթաի միւշթէրէքէի աճիգանէմիգ պիթթանգիմ, Պապը Ալի ճանիպի սամիսիննէ թագաթիմ օլունմագ իւզըէ՝ Գաթմէզամը միւշարունիլէյնէ թէվաթի Գըլընտը, օլ պապտէ:

Ասորագրուիլն

Բոլոր Երկայ Երեսփոխանաց

22 մայիս 1909

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկրորդ ձեւակերպութիւնը զոր կը մնայ մեզ կատարել, հրաւիրակներու ընտրութիւնն է որոնք պաշտօն պիտի ունենան իզմիր երթալով՝ նորընտիր Ս. Պատրիարքն առաջնորդել իր աթոռը, երբ ընտրութիւնը վաւերանայ:

( Մայր Դիւանին առաջարկութեամբ, միաձայնութեամբ՝ հրաւիրակ նշանակուեցան,

- |              |         |              |
|--------------|---------|--------------|
| Տ. Մաղաքիա   | Եպիսկ.  | Տէրունեան    |
| » Գնէլ       | Մ. Վրդ. | Գալէմքեարեան |
| Տօքթ. Վահրամ | էֆ.     | Թորգոմեան    |
| Ստեփան       | »       | Գարեան       |

ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ

[ Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիտէք, Տեա՛րք, թէ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոս, վաղը կը մեկնի Կ. Պոլսէն: Սակայն թուրքիայէ հեռանալէ առաջ, Նորին Վեհափառութիւնը փափագ յայտնած էր անձամբ գալ և իր օրհնութիւնը ձօնել ժողովիս: Այժմ, Վեհափառ Պատրիարքարան կը գտնուի և պատշաճութիւնը կը պահանջէ որ հրաւիրակ մարմին մը երթայ Նորին Սրբութիւնը առաջնորդել Մայր Եկեղեցի: Ուստի կ'առաջարկեմ որ այդ պատգամաւորութիւնը կազմուի հետեւեալ կերպով. — Տ. Հմայեակ և Տ. Մաղաքիա Եպիսկոպոսները, Տ. Արսէն վարդա-

պետ Վեհափառ, Տ. Խորէն Ջահանայ Յարութիւնեան՝ Եկեղեցական երեսփոխաններէն. Իոկ աշխարհական երեսփոխաններէն՝ Եղուարդ էֆ. Գարակէօզեան, Ռուբէն էֆ. Փափազեան, Սմբատ էֆ. Բեաթրիպեան և Ստեփան էֆ. Կուրտիկեան:

(Ժողովոյ որոշմամբ՝ հրաւիրակները կը մեկնին դէպի Պատրիարքարան և քառորդ ժամ ետքը հանդիսաւորապէս կ'առաջնորդեն Վեհ. Հայրապետը Մայր Եկեղեցի: Ն. Վեհափառութեան առջեւէն կ'ընթանային չորս եկեղեցական և չորս աշխարհական հրաւիրակները, իսկ Ն. Վեհափառութեան կը հետեւէին Ս. Էլմիաճնի հրաւիրակները՝

- |                      |               |
|----------------------|---------------|
| Տ. Գարեգին արքեպիսկ. | Սաթունեան     |
| » Աշոտ               | Եպիսկ. Շախեան |
| » Մեսրոպ վարդ.       | Տէր-Մովսէսեան |
| » Բարգէն             | » Աղաւելեան   |

Բոլոր երեսփոխանք յոտնկայս և ծափահարութիւններով ընդունեցին Վեհափառ Հայրապետը որ հրաւիրուեցաւ բազմելու յատկապէս պատրաստուած նախադահական աթոռին վրայ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Յոսեփայն) — Երեսփոխան Հարք և Տեա՛րք, Վեհափառ Տ. Տ. Մատթէոս Բ., Կաթողիկոս համայն Հայոց, ըստ իւր խոստման, զոր փութացած էի հաղորդել ձեզ, կուգայ իր հայրապետական օրհնութիւնն ու հրաժեշտի ողջոյնը ձօնել մեզ: Այս առաջին անգամն է որ Տաճկահայոց Ազգային Ժողովն ամենայն Հայոց Հայրապետ մը հիւրնկալելու բախտին կ'արժանանայ: Ազգային կեանքը սերտած ամէն հայ գիտէ թէ մեր նորընտիր ու սիրեցեալ Հայրապետը Ազգային Ժողովի ամենէն գործօն ու քաջախօս անդամներէն մին եղած է, և թէ հո՛ս քաղած է իր ազգային կեանքի գեղեցկագոյն դասիները: Ծնօրհակալ ենք իր շնորհաբեր այցելութենէն, և անհամբեր ենք լըսել իր հեղինակաւոր խօսքը, Երուսաղէմի Հաշուեքննիչ Յանձնաժողովի տեղեկագրէն յետոյ:

(Նախ և առաջ, Ատենապետ էֆ. ն կարգաց Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ հետեւեալ նամակը. —



Ազնուաշուք Ատենապետ էֆենտի  
Աղգային Ընդհանուր Ժողովոյ

Երոստազիմայ Հաշուց Քննիչ Խորհրդա-  
րանական Յանձնաժողովոյ, 8 Դեկտ. 1908  
թուակիր և 5 թուահամար պաշտօնագրոյդ  
համաձայն իւր պաշտօնն ստանձնած և իւր աշ-  
խատութիւններն աւարտած ըլլալով, պատիւ  
ունի ներկակ յանձնել ձեզ իւր քննութեան  
Տեղեկագիրն, ի նկատառումն Պատկառելի  
Ժողովոյդ:

Մնամք յարգանք

Ի դիմաց Յանձնաժողովոյ

Ասեմաղալի

Ասեմաղալի

Գ. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Յ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

21 մայիս 1909 Կ. Պոլիս

(Յետոյ, Ատենապետ էֆ. ի հաւելին վրայ՝  
Յանձնաժողովոյ անդամներէն Պարգեւ Փա-  
փաղեան, Լեւոն Սաթճեան և Միհրան Գա-  
րագաշեան էֆ. ներք կարգաւ, մաս առ մաս,  
կարդացին Տեղեկագիրը որ այդ միջոցին ձե-  
ռագիր վիճակի մէջ էր տակաւին, նոր ա-  
ւարտած ըլլալով):

ԱՏՆԱՊԵՏ էֆ. — Ծնորակալ ենք  
Յանձնաժողովոյ անդամներէն, որոնք խըզ-  
ճամիտ աշխատութեամբ ի գլուխ հանած են  
իրենց յանձնուած պաշտօնը: Ժողովոյ պար-  
տաւոր է ընդգիմախօսողներու փաստերն ալ  
լսելէ և քննելէ յետոյ, իր վճիռը տալու:  
Հետեւաբար, այս տեղեկագիրը տպագրուե-  
լով՝ պիտի ցրուի բոլոր երեսփոխաններուն:

(Եւ արդարեւ, սոյն նիստէն անմիջապէս  
ետք, առանձին տետրակով տպագրուեցաւ  
Երոստազիմի Հաշուց Քննիչ Խորհրդարանա-  
կան Յանձնաժողովոյ տեղեկագիրը, իրրեւ-  
մաս Ազգ. Ժողովոյ ներկայ ատենագրու-  
թեան: Տեղեկագիրը կը բաղկանայ 28 լայն  
էջերէ, և զայն ստորագրած են Յանձնա-  
ժողովոյ անդամները, Գարեգին Տէմիրճի  
պաշեան, Լեւոն Սաթճեան, Միհրան Գա-  
րագաշեան, Յակոբ Գորեան, Յովսէփ Սու-  
սուֆեան և Պարգեւ Փափաղեան էֆ. ներք):

ԱՏՆԱՊԵՏ էֆ. — Հիմայ կը խնդրենք  
Վեհափառ Հայրապետէն որ հաճի արտասա-  
նել իր հրաժեշտի խօսքերը և օրհնել Ժո-  
ղովոյ:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երեսփոխան Տեառն խորին լուսթեան ու  
պատկառոտ հետաքրքրութեան մէջ տեղ, Վե-  
հափառ Տ. Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոս  
դաշն ձայնիւ արտասանեց հետեւեալ բանա-  
խօսութիւնը:

« Երեսփոխան Հա՛րք և Տեառք,

« Հրաժեշտի ողջոյնս տալէ առաջ պարտք  
կըղգամ մէկ քանի խօսք ըսել այս տեղե-  
կագրին նկատմամբ: Ինչ որ մինչեւ ցարդ  
հաշուական խնդիր անուշով կը ճանչցուէր,  
ուրախ եմ որ Յանձնաժողովը մատը վէրքին  
վրայ դրեր է և եղած վարչական ու կանո-  
նական զեղծումները պատճառ կը նկատէ  
գործուած անկանոնութիւններուն: Ես տաս-  
ներկու տարի ակնհասեալ եղայ այդ վիճա-  
կին: Ծա՛տ ճիշդ է: Կանոնաւոր պիւտճէ գո-  
յութիւն չէ ունեցած. օրինակի համար, ամէն  
ամիս տեսուչները իրենց հաշիւները կը դրկեն.  
Բեթղէնիմի տեսուչն Ա. ամիսը 50, Բ. ամիսը  
70, Գ. ամիսը 80 ոսկի կը ծախսէր.  
ըսող չիկար թէ տակաւին տարւոյն առաջին  
երեք ամիսներն են և այսչափ ծախք եղաւ.  
մինչ մեր պիւտճէն տարեկան սաչափ է. մը-  
նացեալ ամիսներն ալ եթէ այսպէս ծախսուին,  
ո՛ւր կը հասնի վիճակը. աօիկայ չի հարցուիր,  
չի քննուիր և կը մնայ 700 ոսկի աւելի, ինչ-  
պէս ցցուցեր է Յանձնաժողովը իր տեղեկագր-  
ին մէջ:

« Հետեւաբար, Տեառք Երեսփոխանք,  
փափաքելի է որ այս Ժողովին մասնաւոր  
ուշադրութեան առարկայ ըլլայ այս խնդիրը:  
Կան ըսողներ թէ Երոստազիմը աղատ է և  
անկախ Պոլսոյ Պատրիարքութենէն: Կըմ-  
բռնեմ այդ ազատութիւնը, երբ խնդիրն  
Երոստազիմի Պատրիարքին հոգեւոր իրաւա-  
ւորութեան վրայ է որ վարդապետ մը կը ձեռ-  
նադրէ կամ կը պատժէ, բայց չեմ կրնար ըմ-  
բռնել թէ Երոստազիմ իր այնքան գոյքե-  
րով ու կալուածներով, որոնք Ժողովորդին  
նուիրատուութեան արդիւնքն են, Միաբա-  
նութեան միայն վերաբերի: (Ծափեր):

« Այս Ժողովը, որ կը ներկայացնէ Ազգը,  
երբ ինք կ'ընտրէ Երոստազիմի Պատրիարքը,  
իրաւունք ունի ամէն ատեն միջամտելու  
ոչ թէ այն ատեն միայն, երբ պէտք կու-  
նայ: Այս կէտերը քննելու է առանց կու-  
սակցական նկատումներու: Երբ փերմանեմ

բու խօսքը կ'ըլլայ, պէտք է գիտնալ թէ  
1856 փետրուար 6 թուականին Սուլթան Մէ-  
ճիտ Կայսեր հրատարակած քանգիմարի Խաթ-  
թը Հիւմայունով ոչ միայն Հայոց, այլ և  
Յունաց Պատրիարքարանին համար որոշուած  
է որ ժամանակին պէտքերուն համաձայն ի-  
րենց առանձնաշնորհումները քննուին և նոր  
օրէնքներ պատրաստուին: Մեր Սահմանադ-  
րութիւնը կը բղիթի ուղղակի այդ հրովարտա-  
կէն, մինչ վաղեմն անկախութիւն ըսուածը  
հին և ջնջուած հրովարտականքներու վրայ հիմ-  
նուած խօսք մըն է: Սակայն այդ հրովար-  
տականքներուն մէջ ուրիշ առանձնաշնորհումներ  
ալ կային, ինչպէս լալի անցընելով յանցաւոր-  
ները Պատրիարքարան կը բերուէին, Պատ-  
րիարքարանը իր ուղած միաբանը կը բան-  
տարկէր, եկեղեցականները դատարան չէին  
յանձնուեր, եւայլն: Մենք այսօր ատեն մէ-  
ջը կրնանք գործադրել: Մեր իրաւասու-  
թիւնը սահմանափակուած է հոգեւոր խնդիր-  
ներու մէջ: Ես այստեղ չեմ՝ կ'երթամ, սա-  
կայն կը խնդրեմ Պատկառելի Վարչութենէն  
և Ազգ. Ժողովէն որ ընտրուի մի անձ որ  
հսկէ Երոստազիմի մէջ ամէն գործոց վրայ,  
հսկէ փոխառութեանց վրայ և մենք 40—50  
տարուան մէջ 60—70,000 ոսկի տուածու-  
նաւորուինք:

« Պարտականութիւն կըղգամ իմ խորին  
երախտագիտութիւնս յայտնելու այն անար-  
գամեմբ ընտրութեան համար որ կատար-  
ուեցաւ ամէնէն առաջ իմ անձին վրայ, կո-  
չելով զիս Պատրիարքական պաշտօնին: Երբ  
Երոստազիմէն հասայ Պոլիս, Հայ Ազգն իր  
ամբողջութեամբ և Հայ—Հռոմէականներ,  
Հայ—Բողոքականներ և Յայներ իրենց յա-  
գանքն ընծայեցին: Ծնորակալութիւն կը  
յայտնեմ նաեւ իսլամ Ժողովրդին որ ի Յուպ-  
պէ: Կ. Պոլիս, Իզմիր, Պէրութ պատուեց զիս:

« Հրապարակաւ իմ շնորհակալութիւնս  
յայտնելէ ետք Ազգին որ երկրորդ անգամ  
զիս կոչեց Պատրիարքական բարձր պաշտօ-  
նին, պաշտօն մը որ իր համարատուութիւնը  
ունի և երբ վարչութիւնը իր երկամեայ տեղե-  
կագիրը բերէ, իմ ալ բաժինս պիտի տեսնէք  
հոն, ու պատրաստ պիտի ըլլամ լսելու Ձեր  
քննադատութիւնները, կուգամ երախտագի-  
տական բարձր զգացմամբ խորին շնորհակա-  
լութիւն յայտնել այն ներկայացուցիչ մարմ-  
նոյն, որ իմ անարժանութիւնս (անկեղծու-  
թեամբ կ'ըսեմ) կոչեց Կաթողիկոսական Աթո-

ռին: Հաճեցէք արձանագրել իմ շնորհակա-  
լութիւնս:

« Վերջին ժամերն են ասոնք. կը թո-  
ղում այլ եւս Երեսփոխանութիւնդ, ուրդը-  
նուեցայ այնքան ատեն, և չեմ ըսեր թէ  
պարտքս կատարեցի, այլ սիրեցի կատարել:  
Հայրապետական պաշտօնս վաւերացուց Նի-  
քոյա Բ. Կայսրը, հետեւաբար պարտք կը  
ծանրանայ իմ վրաս, ինչպէս Ազգին, նոյն-  
պէս Ռուսաց Կայսեր յայտնել շնորհակալիքս:

« Տեա՛րք, իմ մեկնումիս առթիւ բաւա-  
կան խնդիրներ եղան լրագրաց և Ժողովուր-  
դին մէջ: Հարկ է բացատրել թէ ինչ պա-  
րագայի մէջ կ'երթանք Բեդերապուրկ. ահա-  
ւասիկ մեր խօսքն և առաջարկը դեռ պանին.  
կը փափաքեմ որ Դիւանը կարդայ:

(Ատենապետ Չերազ էֆ. կը կարդայ  
Վեհ. Հայրապետին կողմէ Ռուսիոյ Վսեմ.  
Դեսպանին ուղղուած ֆրանսերէն նամակը,  
որուն ահաւասիկ հարազատ թարգմանու-  
թիւնը):

Առ Նորին Վսեմութիւն

Պարոն Զինովիէվ,

Դեսպան Ռուսիոյ

Լէն. Լէն. Լէն.

Պարոն Դեսպան,

Ձեր Վսեմութիւնը կ'իմացնէ ինձ թէ  
Ռուսիոյ Վեհափառ Կայսրը հաճած է հրա-  
մայել ինձ որ, մայիս ամսոյ վերջերը, Սուրբ-  
Բէդէրապուրկ երթամ, ուր զիս ընդունելու  
մեծ պատիւը պիտի ընէ ինձ, էջմիածին եր-  
թալէս առաջ:

Խորապէս յուզուած եմ այս Կայսերական  
շնորհէն, որ բերկրութեամբ կը ընու զիս:  
Նա, բաց աստի, առիթ պիտի ընծայէ ինձ  
առ ռոտ Նորին Կայսերական Վեհափառու-  
թեան Գահոյից սփռելու իմ ամենաջերմ իղ-  
ձերս իր թանկագին կենաց պահպանութեանը  
համար, և իրեն անձամբ յայտնելու իմ բոլոր  
երախտագիտութիւնս՝ Կաթողիկոսական ընտ-  
րութեանս վաւերացմանը նկատմամբ:

Ձեր Վսեմութիւնը չ'անգիտանար սակայն  
թէ, ըստ դարաւոր կանոնաց ու աւանդու-  
թեանց Հայ Եկեղեցւոյ, Սուրբ Գրիգոր Լու-  
սաւորչի Աթոռոյ գահակալին ընտրութիւնը  
իր վերջնական վաւերացումը էջմիածնի Կա-  
թողիկէին մէջ իր օծումէն յետոյ միայն կըս-  
տանայ, որ տեղի կ'ունենայ՝ Միաբանութեան



կողմէ զրկուած յատուկ Պատգամաւորութեան մը հրաւերին վրայ:

Այս բարեպատեհ առիթէն օգտուելու ջերմագոյն փափագանայ հակառակ, ներքին չը պիտի լինէր ինձ ուրեմն, Պարոն Դեօպան, Նորին Կայսերական Վեհափառութեան ներկայանալ՝ իբր Ծայրագոյն Պատրիարք Հայ Եկեղեցւոյ. նաեւ համոզուած եմ թէ Նորին Կայսերական Վեհափառութիւնը պիտի բարեհաճի գնահատել հաւատարմութիւնս Հայ Եկեղեցւոյ կանոններուն ու աւանդութիւններուն, որոնց պահպանութիւնը իմ ակար ձեռքերուն յանձնուած է:

Սակայն ճշմարտագէտ երջանիկ և խորագէտ պատուուած պիտի զգամ զիս՝ Ռուսիոյ Օգոստոսիա Վայսեր ներկայացնելով ամենայնարդարեւ մեծարանքներս, եթէ ներուի ինձ կատարել զայն առանց պաշտօնական հանգամանքի, քանի որ Կաթողիկոս օծուած չեմ դեռ:

Կը համարձակիմ ուրեմն խնդրել Ձեռնէ, Վսեմափայլ Տէր, որ բարեհաճիք այս խոնարհ դիտողութիւնները մատուցանել առ ռոս Կայսերական Դահլիճ, միանգամայն ապահովելով Վեհափառ Զարը իմ կատարեալ հնազանդութեանս և ամենախորին անձնուիրութեանս նկատմամբ:

Դալով Սուրբ-Բէղէքսպուրի երթալուս համար որոշուած թուականին, թէեւ նա շատ անպատեհութիւններ կ'ընծայէ ինձ, Ձեր Վսեմութեան կը խոստանամ որ մայիսի վերջերը պատրաստ գտնուիմ: Հաճեցէք ուրեմն հարկ եղած հրամանը հաղորդել էջմիածնի Աթոռի Տեղակալին՝ այն պատգամաւորութեան առաջմանը համար որ, ըստ Ծիսից Հայ Եկեղեցւոյ, պարտի հոս գալ՝ ճամբորդութեանս միջոցին ուղեկցելու համար ինձ:

Երկնից օրհնութիւնները հրաւիրելով Ձեր վրայ, պատիւ ունիմ լինիլ, Պարոն Դեօպան, ամենախորին յարգանքով:

Ձեր Վսեմութեան

Ամենահնազանդ ու անձնուէր ծառայ  
(Ստոր.) ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՄՍՏՔԷՆՈՍ ԻԶՄԻՐԵԱՆ

Կոստանդնուպոլիս

24 ապրիլ (Հ. Տ.) 1909

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՏԻ, Շարունակելով. — «Ահաւասիկ, Տեա'րք, լսեցիք իմ պատասխանս: Ձեր Կաթողիկոս ընտրածն իր քաղաքական վաւերացումն ընդունած ըլլալով, բաւական չէ սեպած, ցորչալի ընդունած չէ վերջին կնիքը՝ օծումը, հետեւաբար իրեն Մայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս չի կրնար ներկայանալ: Ձեմ կարծեր որ այս մասին առարկութիւն տեղի ունենայ:

«Երբ որոշած էի մեկնումս Պոլսն, ուր ապրեցայ 64 տարիներ, հարկ էր ներկայանալ Օգոստոսիա Սուլթանին՝ հրաժեշտ առնելու համար: Կայսրն առատագութ զգացմամբ ընդունեց զիս. երբ մէկ կողմէն երթաւ բարեւաւ կ'ըսէր, միւս կողմէ ցաւ կը զգար Առաջնայի վշտառիթ դէպքերուն համար: Ահաւասիկ կը ներկայացնեմ Դիւանիդ, Ն. Վեհափառութեան մատուցած զիրոս:

(Ատենադպիր Հրանտ էֆ. Ասատուր կը կարդայ թուրքերէն պատճէնը Ս. Հայրապետին կողմէ Կայսեր մատուցուած ուղերձին):

«Բաթիշահը մուղղամ չէվքէթբէնահ շէֆէտիմ հագրէթլէրի:

«Լիւսագաթըմ օլմաթըղը հալտէ՝ ումում էրմէնիլէրին մերձի ըստանիսի պուլընան էջմիածին Կաթողիկոսըղընա իշթիրաքի ու մումիի մէլլէթլէ վուգու պուլան ինթիսապի տախանէմ՝ ուսուլի վէճիլէ թաթիք գըլընարադ՝ Կաթողիկոսըղը մէրքէզ վէ քիւրսիսի օլան Բուսիատա քեախն էջմիածին շէֆէրինէ աղիմէթիմ իճապ իթմէքլէ արղը վէտա վադիֆէսինին իյֆաթըղընումա, Հուզուրը Շահանէլէրինէ գապուլ շէրէֆինէ նաիլ օլտըղըմտան նաչի՝ քէնտիմի պաթիթար ատտ իտէրիմ:

«Գանունի Էստաի աճքեամը միւնիֆէսինին թէմամի թաթաք վէ իճրաթը վէ մէմալիքի Օսմանիյէտէ ուսուլը Մէշրութիյէթին իսթիգրար վէ իսթիմարը, շէրէֆ վուգու պուլան ճիւլուսը մէյմէնէթ մէնուսը Շահանէլէրիլէ թէմմի՝ պուլըլմըլ օլմաղլէ, Իտարէի ըստանիյիմ տաթիլինտէ պուլընըզ վէտիտի տէսթի ատալէթբէյվէթի թաճտարը ազամիլէրի պուլընմըլ, վէ թաթթը Ալիի Սալթանաթը սէնիյէլէրինէ վէ տէվլէթի Ալիյէի Օսմանիյէտէ սատագաթը գաթիմէ վէ մուհապպէթի սամիմէլէրիյէ քէսպը շէօքբէթ իթմիլ օլան Օսմանը Էլմէնի միլլէթի ճէմիլ

էֆրատընըն մաթլուպը Ալիի Շահանէլէրի վէճիլէ ճան վէ ըրզ վէ մալլէրինտէն էմին օլարաք րէֆահ վէ սատաթի չալ իլէ եաշաեաճաղարը հագգընտա իւմիտ ու իթիգատարը պէր քէմալ տըր:

«Ատանա վէ Հալէպ վիլայէթլէրինտէ վէ միւլհագաթընտաքի հատիսաթը ախիլէի ֆէճիանըն Էրմէնի սաքին տիկէր մահալլէրէ մէնի սիբահէթի, վէ մէմալիքի Օսմանիյէնին հիլ պիր ճիհէթիտէ ատէմի թէքէրիլէրի զըմընտա թէտապիլի օէրիա վէ միւլէսիլէնին իթթիլազ վէ իճրաթը խուսուսընա շէրէֆատըր օլան իրատաթը մէրահիմ կայաթը միւլլէքանէլէրինտէն, վէ միւսապին ու միւլթաճիլին թէմմիլ վէ թէտարիքի իսթիլաճարը հագգընտա իպղալ պուլըլմըլ իսթաֆ ու աթաֆը Շահանէլէրինտէն տօլալը թէշէքքիւր իտէր, վէ գաթը շէվքէթսիմաթը հիւլէմտարիլէրինին քէմալը սընաթ ու աֆիլիյէթլէ թաթթը Ալի պաթթը հիւլմանուլարընտա տաթիմ վէ պէրքարար, վէ հիւլէրէ մէթի մէշրութաի Օսմանիյէնին ումուր վէ մէսալիի միւլհիմմէսինտէ թէվֆիգաթը իլաֆիլէտէ մաղհար պուլըլմալարըն՝ շէնապը Հագգան Նիեազ վէ թէգարրու էլլէրիմ):

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՏԻ, Շարունակելով. — «Կայսեր մեր ուղերձին տուած պատասխանը կարդացիք արդէն թերթերու մէջ և ես չեմ ուղեր կրկնել այստեղ, որովհետեւ օրը կ'եքեկոյանայ:

«Դիտէք որ Հայրապետական պաշտօնը երեք դիրքով կը ներկայանայ: Առաջին՝ Հայրապետը՝ հայր է Հայ Եկեղեցականութեան և Հայ Ժողովրդեան ո՛ւր որ ալ գըտնուի. երկրորդ՝ Հայրապետը Պատրիարքն է Ռուսիոյ Հայոց. երրորդ՝ Մայր Աթոռոյ Վսեմայրն է: Այս երեք դիրքերուն մէջ ալ պարտաւորութիւններ ունի հանդէպ Աստուծոյ, հանդէպ Տէրութեան և հանդէպ Ազգին: Երբ պիտի պահանջեն ինձմէ որ իմ պարտքս կատարեմ, ես ինքս ալ պիտի պահանջեմ որ ինձ նկատմամբ անոնք եւս իրենց ունեցած պարտաւորութիւնը կատարեն: Ես, տկարս, Ազգին և Մայր Աթոռոյ անդամոց բարձր զգացման և սրտին վրայ վստահ տանձնած եմ այս պաշտօնը: Ով որ կուզէ որ իր Ազգին պէտքերուն դարման տարուի, Հայոց վանքերը պայծառ ըլլան, ամենազօրաւոր աջակցութիւնը պէտք է նուիրէ ինձ:

Երբ կը թողում Պոլիսը՝ սկսելու ծանր պատասխանատուութիւն ունեցող պաշտօնս, այն վստահութիւնն ունիմ թէ այս աջակցութիւնը պիտի վայելեմ իրեն պէտք եղած նշանակութեամբ: Ասիկա կը յայտնեմ Ազգին առջեւ, եկեղեցականաց առջեւ:

«Եկեղեցականաց առջեւ կ'ըսեմ, որովհետեւ կը տեսնեմ որ շատ անգամ չի յարգուիր այն ուխտը որ կը կատարուի առանց ո՛ր և է բռնադատութեան այս Սեղանին առջեւ, ցկեանս հաւատարիմ մնալու և պահելու Հայաստանեայց Եկեղեցին իր բարձր նկարագրով: Կ'ըմբռնեմ բարենորոգմանց խնդիրներ, եպիսկոպոսներու և քահանաներու վերաբերեալ խնդիրներ, սակայն դաւանաբանաբանական խնդիրներ շատ հեռուն կը տանին մեզի:

«Բանի միտքերը զբաղած են այդ խնդիրներով, առանց լուծում տալու, մենք չունինք պէտք վերստին այն խնդիրներով զբաղելու: Ես այն վստահութիւնն ունիմ թէ զբաղելու: Ես այն վստահութիւնն ունիմ, ես ալ իմ համոզումս ունիմ, մի՛ բռնադատէք զիս որ անոր հակառակ գործեմ, երբ քաղաքական վտանգներ ալ յառաջ կրնան բերել:

«Դալով Ժողովրդեան, հիմա կարգ մը գաղափարներ տարածուած են Եկեղեցիէն ուժացնելու համար դիրքին: Մեր այսօրուան պահանջը միջնադարեան սկզբունքները չեն, այլ քրիստոնէական կեանքը պահելու իր ճշմարիտ բարձրութեան և վսեմութեան վրայ: Աւետարանին կատարեալ հասկացողութեամբ: Կը խնդրեմ որ կուսակցական մարդ չըմբռնուի Հայ Եկեղեցականը. ամէն կուսակցութիւնէ ազատ և վեր պէտք է մնայ: Մեր խղճի ձայնով քննենք և հասկնանք մեր սխալը:

«Թուրքիոյ մէջ գտնուած միջոցիս ամենաջերմ փափաքս էր որ Կաթողիկոսական Աթոռոց հետ յարաբերական խնդիրը ճշդուի, և առ այս պէտք եղած զոհողութիւններն ըլլան, իշխանութիւնը մի ըլլայ: Կաթողիկոսութիւնն Ազգինն է, Ամենայն Հայոց կը վերաբերի, և ես իր նշանակութեանը մէջ պիտի պահեմ զայն, որպէս զի չմեղանայեմ: Կը խնդրեմ Ս. Կաթողիկոսներէն (Ի Սիւս և



յԱղթամար) որ նոյն եղբայրական ոգին ունենան. երբ միանանք, ոյժ ունինք. երբ բաժնուինք՝ կը ջլատուինք:

«Տեարք. 1894 թ. 26ին առաջին անգամ երբ Պատրիարք եղայ, կատարեցի թախտս, զոր յապաւուած կը գտնեմ նոյն նիստին արձանագրութեան մէջ: Բնագիրը գտած եմ ահաւասիկ, հաճեցէք ձեր որոշումը տալ, որպէս զի արձանագրութիւն եւ գիտցուի թէ ինչպէս ըմբռնած եմ պաշտօնս, անկախ Հայաստան ուզած եմ թէ կենաց եւ ընչից ապահովութիւն:

(Ատենապետ Չերազ էֆենտին կը կարգայ Ս. Հայրապետին՝ 1894 Ղեկու. 26ին, առաջին Պատրիարքութեան առթիւ, Մայր եկեղեցւոյ մէջ արտասանած Ուխտին բնագիրը որ ահաւասիկ. —

#### Տեարք Երեսփոխանք

Պատկառելի Ժողովդ իւր Դեկ. Դինիստին մէջ կատարած ընտրութեամբն կոչեց զիս Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական պաշտօնին: Պատրիարքական պաշտօնն որ չափ փափուկ եւ դժուարին ա՛յնչափ եւ առաւել եւս անարժէք էր իմ անձն, եւ հեռի այն պաշտօնին պարտականութիւնները կատարելու թէ՛ մտաւորական եւ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ այլ կարողութիւններէն, բայց մէկ կողմէ եկեղեցական կոչումս կը պարտաւորէր զիս համակերպիլ որոշման Պատկառելի Ժողովոյդ, եւ միւս կողմէ ա՛յն մած վստահութիւնը եւ համակրութիւնը՝ զոր իւր կատարած ընտրութեամբն ցոյց կուտար Պատկառելի Ժողովդ, որ օրինաւորապէս կը ներկայացնէր Հայոց Ազգը ի Թուրքիա, համարձակութիւն տուին ինձ ընդունիլ, առանց ի հաշիւ առնելու ֆիզիքական քայքայեալ վիճակս, որ ամենուր յայտնի է. ուստի շնորհակալութիւն առ Պատկ. Ժողովդ յանձին իմ կատարած անարգամտար ընտրութեան համար, նոյնպէս շնորհակալութիւն առ ինքնակալ միահեծան Կայսրն, որ հաճեցաւ վաւերացնել իմ ընտրութիւնը, եւ արդ կը կատարեմ Պատրիարքական թախտը, զոր կը գծէ Ազգային Սահմանադրութիւնը:

«Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ազգ. Ժողովոյ» հրապարակաւ թախտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան եւ Ազգիս, եւ

ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»:

Տեարք, կատարեցի իմ թախտը. կուզեմ սակայն այս հանդիսական վայրկեանին իմ համոզումներս յայտնել Պատրիարքական թախտին պարունակած երեք կէտերուն նկատմամբ:

Ա. — Հաւատարիմ մնալ տէրութեան. — Հաւատարիմական զգացումները պէտք է ներքին համոզման արդիւնք լինին, եւ այդ համոզումն ալ պէտք է հաստատուած ըլլայ կենաց, ընչից եւ պատուոյ կատարեալ ապահովութեան իրաւունքը վայելելու գոհունակութեան վրայ. այս պայմաններէն դուրս ամէն յայտնարութիւնը կեղծիք են եւ վստահար թէ՛ ազգին շահուց եւ թէ՛ տէրութեան շահուց, եւ այդ իրաւունքը իրապէս վայելելու համար ամեն իղձ, խնդիր, արտօնջ, դիմումներ եւ այլն հաւատարմական զգացմանց զեղծումն երբեք չեն նկատեր, այլ ընդհակառակն աւելի ամբապնդումն հաւատարմական ճշմարիտ զգացմանց:

Բ. Հաւատարիմ մնալ ազգիս. — Ազգին հաւատարիմ մնալ՝ եկեղեցւոյ հաւատարիմ մնալ ըսել է. զի եկեղեցի եւ ազգ անբաժան են, այս է առաքելական դրօշմն Հայաստանեայ Ս. Եկեղեցւոյ: Եկեղեցւոյ եւ ազգին իրաւունքները սուրբ են եւ անձեռնմխելի. այս իրաւանց պահպանութեան եւ պաշտպանութեան հաւատարիմ թարգմանը միայն պիտի ըլլայ Պատրիարքը, զի Պատրիարքը այդ նուիրական իրաւանց տէրը չէ, այլ առանց աւանդապահն է, եկեղեցւոյ եւ ազգին պաշտօնեայն է:

Գ. Հսկել Ազգ. Սահմանադրութեան անթերի գործադրութեան. — Ազգ. Սահմանադրութիւնը եկեղեցւոյ եւ ազգին ունեցած առանձնաշնորհմանց ամփոփումն է. Սահմանադրութեան գործադրութեան հսկելը եկեղեցական եւ ազգային առանձնաշնորհութիւնները անվթար պահել ըսել է, որ հանդէպ ամէն ազգային անհատ պատկառ պէտք է կենայ եւ իւր բարոյական ու նիւթական պարտականութիւնները կատարէ, այն է ազգ. պաշտօններու կոչուած ատեն խոյս չտայ, այլ սիրայօժար մասնակցի վարչական պաշտօններու, եւ նիւթապէս մասնակցի ազգ. վարչական, կրթական եւ այլ ծախուց: Այս կերպով կրնայ պահուիլ Ազգային վարչութեան եւ Ազգին միջեւ համերաշխութեան ոգին:

Թեան եւ Ազգին միջեւ համերաշխութեան ոգին:

Եւ Ձեզ լծակիցք եմ եւ վստակակից դասը եկեղեցւոյ պաշտօնէութեան, Արքեպիսկոպոսոսն եւ վարդապետք եւ քահանայք, հրաւեր կը կարգամ որ միասիրտ, միահոգի աշխատինք մեր Ազգին եւ եկեղեցւոյն համար եւ մասնակցինք ամեն կարգի աշխատութեանց՝ թէ՛ աստ ի մայրաքաղաքիս եւ թէ՛ ի գաւառս:

Բարձրեալն Աստուած փրկէ եւ ազատէ զԱզգս Հայոց եւ զՍուրբ Եկեղեցի Հայաստանեայց յամենայն չարէ:

Իմաստութեան հոգին թափէ իւր անսահման իմաստութիւնը Թուրքիոյ ինքնակալ Կայսեր Սուլթան Համիտ Խանի մտքին ու հոգւոյն մէջ որ՝ կարողացնէ ի գործ դնել Աստուածային արդարութիւնը Թուրքիոյ լայնածաւալ պետութեան համար եւ Հայոց Ազգին համար:

26 Դեկտեմբեր 1894

Ս. ՀԱՅՐԱՊԵՏԸ, Շաբուհակելով. — «Պիտի խնդրէի նաեւ լրագրութենէն, որ եթէ ազգային որ եւ է խնդրոյ վրայ գրեն, այս ահաւակ պարագաներու մէջ աւելի չըջանկատ զանուին: Մեր դէմ տարիներու արհաւիրքները կան, Կըմբռնեմ որ սկզբունքներն իրարմէ տարբեր ըլլան, սակայն կարծիքներն իրարու չփոխելով լոյս պէտք է արտադրեն, լոյս՝ կեանքի առաջնորդութիւն տալու համար:

«Մեր լրագրութիւնն որ կ'աշխատի ամեն տեղեկութիւն եւ ամեն լուր իր ատենին հաղորդել, աւելի օգտակար պիտի ըլլայ, եթէ կարենոր պարագաներու մէջ միեւնոյն ուղղութեամբ հաղորդէ տեղեկութիւնները, որք այլ եւ այլ ձեւով հրապարակ ելլելով, զանազան մեկնութեանց առիթ կուտան: Այս կերպով, մեր լրագրութիւնը պիտի աւելցնէ իւր օգտակարութիւնը, ըլլայ Պոլսոյ մէջ, ըլլայ ալլուր:

«Մնա՛ք բարեւաւ, յիշեցէ՛ք զիս, ինչպէս ես պիտի յիշեմ միշտ ձեզ: Կը թողում երեսփոխանութիւնը, զոր այնքան սիրած էի. իմ շնորհակալութիւնս ու երախտագիտութիւնս կը յայտնեմ ձեզ. պիտի աղօթեմ ամբողջ Ազգին համար, դուք ալ աղօթեցէ՛ք որ օգտակար ըլլամ Հայաստանեայց Եկեղեցւոյն, օգտակար ըլլամ տառապալ Հայ Ազգին»:

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՅԻ. — Ի սրտէ շնորհակալ եմք Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայրապետան օրհնութիւններէն եւ իմաստուն խորհուրդներուն: Իր ձայնը, բարձր պիտի հնչէ միշտ մեր ականջին եւ իր յայտնած կալ ծէքները մեծ կշիռ պիտի ունենան մեր տալիք որոշումներուն վրայ: Յանուն Տաճկահայոց բարձրագոյն Ժողովին՝ կը մաղթեմ՝ նորին վեհափառութեան բարի ճամբորդութիւն, արդիւնաւոր պաշտօնավարութիւն եւ առողջ ու երկար կեանք: Կեցցէ՛ վեհափառ Հայրապետը:

(Բոլոր երեսփոխանք յոռնկայս եւ ծափահարութեամբ ընդունելով այս յայտարարութիւնը, «Կեցցէ՛» դռնեցին եւ կարգաւ համբուրեցին Ն. Վեհափառութեան աջը: Ս. Հայրապետը, միեւնոյն հանդիսական դնացքով առաջնորդուեցաւ Պատրիարքարան):

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՅԻ. — Վեհ. Հայրապետի մեկնումին առթիւ, մեր վրայ պարտք կը ծանրանայ որ յանուն Թրքահայոց աշխարհական ուղեկից պատուիրակ մը որոշուի: Ես հակառակուիմ որ Ժողովիս երկրորդ Ատենապետ Տօքթ. Թորգոմեան էֆ. եւ կամ երրորդ Ատենապետ Ասլանեան Դէօրգ էֆ. նշանակուի:

ՉԱՅՆԵՐ. — Կը խնդրենք որ յանուն Ժողովոյ Դուք ստանձնէք այդ պաշտօնը, Ատենապետ էֆենտի:

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՅԻ. — Եթէ Ժողովդ այդպէս կը փափաքի, կստանձնեմ այդ պաշտօնը:

ՉԱՅՆԵՐ. — Շնորհակալութեամբ կ'ընդունինք:

Ատենապետ փակուեցաւ Ժամը 12ին:

#### Ազգային Ժողովոյ

Բ. Ատենապետ  
ՀԱՅԵ ԽՈՃԱՍՍԵՐԱՆ

Ատենապետ  
ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

Տպագրուած է ընդ հսկողութեամբ՝ Ազգ. Ժողովոյ Եղեմից Գանձախոսին:

Վ. Ատենապետ  
ՊԱՐԴԵՆ ԳԱՓԱՆՅԱՆ

Ատենապետ  
Ս. Ե. ԳԱՍՊԱՆՅԱՆ

5 Դեկտեմբեր 1909.



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

( 22 Մայիս 1909 )

ԿՆԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Հմայեակ Եպիսկոպոս Գիմնասիական
2. Եղեիկ » Ապագանի Բ.Պ.
3. Գնէլ Ծ.Վրդ. Գալէմբեարեան
4. Արսէն » Վեհուհի
5. Գրիգորիս » Պալատեան
6. Արիստակէս Քաջ. ձիզմէճեան
7. Միքայէլ » Աշեան
8. Վահան » Խոյեան
9. Յուսէկ » Քաջուհի
10. Սուքիաս » Պալատեան
11. Հմայեակ » Էքսէրճեան
12. Տրդատ » Պալատեան
13. Տաճատ » Փաշաեան
14. Աբէլ » Երեցեան
15. Գէորգ » Պաշալեան
16. Արիստակէս » Հիւարեան
17. Խորէն » Յարութիւնեան
- 18.
- 19.
- 20.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

Բերա—Գասրմ-փաւա

21. Արամ Էֆ. Հալաճեան
22. Արշակ » Գարակէօզեան Բ.Պ.
23. Խնդիբ » Սիմոնեան
24. Մինաս » Չերալ
25. Ստեփան » Գարեան
26. Տօթ. Վահրամ » Թորգոմեան
27. Տօթ. Տիգրան պէյ Աճէմեան
28. Տիրան Էֆ. Կիւմիւշկերտան Բ.
- 29.

Գասր-գիւղ

30. Աղասի Էֆ. Աղասեան
31. Արմենակ » Մանուկեան
32. Կարապետ » Քերէստէճեան
33. Ղազարոս » Չալազեան
34. Միհրան » Շիրինեան Բ.
35. Մկրտիչ » Մանուկեան
36. Սարգիս » Էսմէրեան

Գրնալը-Գարալ

- 37.
38. Բակոբ Էֆ. Գորեան
39. Յովհաննէս » Հինգլեան
40. Ռուբէն » Զարդարեան
41. Տօթ. Սիմոն » Սեղբոսեան
42. Միսաք » Սուրեան

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. 3 Բացակայութիւն երրորդ :
- Բ. Պ. Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :

Գում-գաբու, Գում-գաբուի դուրս

43. Դաւիթ Էֆ. Տէր-Մովսէսեան
44. Տօթ. Կարապետ Մուրաֆեան
45. Համբարձում » Պալատեան
46. Սարգիս » Սուրն Բ. Պ.
47. Տիրան Էֆ. Պապեան Բ.
48. Գում-գաբու
- 49.
50. Էյիպ Ս. Եղիա
51. Միհրան Էֆ. Գարաջաճեան
52. Գարրիէլ Էֆ. Նէշտերճեան Բ. Պ.
53. Պետրոս » Հալաճեան
54. Ռուբէն » Փափաղեան
55. Սմբատ » Քեաթիկեան

Կէսիկ-փաւա

56. Հմայեակ » Արամեանց
57. Յարութիւն » Ճանկիւլեան
- 58.
- 59.
- 60.

Մաքրի-գիւղ, Սան-Սթեֆանո

61. Երուանդ Էֆ. Խէրպէկեան Բ. Պ.
62. Թագաւոր » Արեւեան Բ. Պ.
63. Խաչիկ » Մանեասեան
64. Միհրան » Սէթեան
65. Յովհաննէս » Խազուլեան
66. Յովսէփ » Քազազեան
67. Արսէն » Արսէնեան

Նարը-գաբու

68. Վառլապուհ Էֆ. Մանուկեան
- 69.

Պալաք

70. Երուանդ Էֆ. Գարեան
71. Տօթ. Կարապետ Մաղուպեան
72. Հէթում » Սէթեան Բ. Պ.
73. Ստեփան » Թեյիկեան

Պէյֆոգ-Ղալաքիա

- 74.
75. Միհրան Էֆ. Հալաճեան

Պէյիլիսերէ

- 76.
- 77.



|      |                                       |       |
|------|---------------------------------------|-------|
| 78.  | Սամաթիա Ալթըմէրէ                      |       |
|      | Սամաթիա Ս. Գէորգ                      |       |
| 79.  | Բիւզանդ. էֆ. Պօղոսեան                 | Բ.    |
| 80.  | Գրիգոր » Զօհրապ                       |       |
| 81.  | Լեւոն » Սասթճեան                      |       |
| 82.  | Հայկ » Խօճասարեան                     |       |
| 83.  | Միքէլ » Մսերեան                       |       |
| 84.  | Պարգեւ » Փափաղեան                     |       |
| 85.  |                                       |       |
|      | Սկիւսար Եկեղ-մանալի                   |       |
| 86.  | Թորգոմ էֆ. Պօյաճեան                   | Բ. 2  |
| 87.  | Վահան » Սուրենեան                     | Բ.    |
| 88.  |                                       |       |
|      | Սկիւսար Ս. Խաչ                        |       |
| 89.  | Դարեգին էֆ. Տէմբրճիպաշեան             |       |
| 90.  | Յարութիւն » Շահրիկեան                 |       |
| 91.  | Վարդգէս » Սէրէնկիւլեան                |       |
| 92.  |                                       |       |
| 93.  |                                       |       |
|      | Բուսէլի-նիսար, Պօյաճը-գիւղ, Եկեղ-գիւղ |       |
| 94.  | Լեւոն պէյ Փափաղեան                    | Բ.    |
|      | Օրբադիւղ                              |       |
| 95.  | Խաչիկ էֆ. Մըվաճեան                    |       |
| 96.  | Յովսէփ » Գուլուճեան                   | Բ. Գ. |
|      | Ֆերիզիւղ                              |       |
| 97.  | Եղուարդ էֆ. Գարեկեօղեան               |       |
| 98.  | Հրանտ » Ասատուր                       |       |
| 99.  | Յակոբ » Պահրի                         |       |
| 100. | Յովսէփ » Երուսէլեան                   |       |
|      | ԳԱՆԱՍՏԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻՆԻՐ                 |       |
|      | Աղբիւնուսլիս                          |       |
| 101. | Մենիկ էֆ. Տէրուհեան                   |       |
|      | Ալկն                                  |       |
| 102. | Հայկաղան էֆ. Պէկեան                   |       |
|      | Աղբամար                               |       |
| 103. |                                       |       |
|      | Ամասիա—Մարգուան                       |       |
| 104. |                                       |       |
|      | Ասանա                                 |       |
| 105. | Արիստակէս էֆ. Դասպարեան               |       |
|      | Աւաթիւր                               |       |
| 106. | Արթաթի էֆ. Սարաֆեան                   |       |
|      | Բաբերդ                                |       |
| 107. | Երուսնդ էֆ. Սրմայրէշեան               |       |
|      | Բալու                                 |       |
| 108. | Մեկքոն էֆ. Կիւրճեան                   |       |
|      | Բաղէ                                  |       |
| 109. |                                       |       |
|      | Գաղասիա                               |       |
| 110. | Ալիքոան էֆ. Թօփալեան                  |       |
|      | Եղիպսոս                               |       |
| 111. | Վահան էֆ. Թեքեան                      |       |

|      |                             |       |
|------|-----------------------------|-------|
|      | Եղեթիա                      |       |
| 112. | Բիւզանդ. էֆ. Քէշեան         |       |
|      | Երզնկա                      |       |
| 113. |                             |       |
|      | Եղուկիա                     | Բ. 2  |
| 114. | Գէորգ էֆ. Ասլանեան          |       |
|      | Եօղլաս                      |       |
| 115. | Ստեփան էֆ. Գրգորիլեան       |       |
|      | Զմիւռնիա                    | Բ.    |
| 116. | Զարմայր էֆ. Ճշմարտախօսեան   |       |
|      | Խարբերդ                     |       |
| 117. |                             |       |
|      | Կարին                       |       |
| 118. | Սողոմոն էֆ. Տէր-Աղաբեան     |       |
|      | Կեսարիա                     |       |
| 119. | Վահան էֆ. Խսեան             |       |
|      | Կիւրին—Մանգլիք              |       |
| 120. | Միսաք էֆ. Գօլուհեան         |       |
|      | Հալէպ—Այնթապ                |       |
| 121. | Արտաշէս էֆ. Յնտղեան         |       |
|      | Հանքն                       |       |
| 122. | Տօթ. Տէօփլէթ էֆ. Տանուր     |       |
|      | Մալաթիա                     |       |
| 123. | Յակոբ էֆ. Ազիլեան           |       |
|      | Մարաւ—Զէյթուն               |       |
| 124. | Սմէա էֆ. Բիւրատ             |       |
|      | Մու                         |       |
| 125. | Գեղամ էֆ. Տէր-Կարապետեան    |       |
|      | Նիկոմիդիա                   |       |
| 126. |                             |       |
|      | Շապին-Գարանիսար             |       |
| 127. |                             |       |
|      | Զմեկաձագ—Զարաւանգ           |       |
| 128. |                             |       |
|      | Պաղսաս                      |       |
| 129. |                             |       |
|      | Պանսրմա—Պալքէսի             | Բ. Գ. |
| 130. | Սուրեն էֆ. Պարթեւեան        |       |
|      | Պրուսա                      |       |
| 131. | Ստեփան էֆ. Կուրտիկեան       |       |
|      | Ռուսնուֆ                    |       |
| 132. |                             |       |
|      | Ռօսոսթ                      |       |
| 133. | Խորէն էֆ. Ճամճեան           |       |
|      | Սեբասիա                     |       |
| 134. | Տօթ. Նաղարէթ էֆ. Տաղաւարեան |       |
|      | Սղերդ                       |       |
| 135. |                             |       |
|      | Վան                         | Բ.    |
| 136. | Վահան էֆ. Փափաղեան          |       |
|      | Տիգրանակերտ                 |       |
| 137. | Տիգրան էֆ. Նաղաշեան         |       |
|      | Տիվրիկ                      |       |
| 138. | Խաչատուր էֆ. Երէկեան        |       |
|      | Տրապիզոն                    |       |
| 139. | Նշան էֆ. Ճիվանեան           |       |
|      | Քէօքանիս                    |       |
| 140. |                             |       |

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

| ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ                    | ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎ              |
|-----------------------------------|------------------------------|
| Հմայեակ Եպիսկ. Դիմաֆեան Ա.Ասեմապե | Մանուկ էֆ. Ագարեան Ա.Ասեմապե |
| Մաղաֆիա » Տերունեան Բ. »          | Տօթ. Սիմոն » Սեդրոսեան Բ. »  |
| Գնէլ Մ.Վրդ. Գալեմեան Ա.Ասեմապի    | Մարգիս » Սուրեն Ա.Ասեմապի    |
| Տաճաս Բահ. Փաշաեան Բ. »           | Հայկ » Խօճասարեան Բ. »       |
| Արսէն Մ.Վրդ. Վեհուհի              | Ալիֆսան » Թօփալեան           |
| Արիսակէս Բահ. Երեցեան             | Արամ » Հալաւեան              |
| Արիսակէս » Հիսարեան               | Բիւզանդ » Քէշեան (Հրաթ.)     |
| Արիսակէս » Ճիգմեան                | Հմայեակ » Խոսրովեան          |
| Խորէն » Յարութիւնեան              | Միմաս » Զեւազ (Հրաթ.)        |
| Դարեգին » Խաչատուրեան             | Յակոբ » Հսայեան (Հրաթ.)      |
| Յուսիկ » Բաշունի                  | Յակոբ » Պահրի                |
| Սուֆիաս » Պաղքեան                 | Յակոբ » Պօյաճեան             |
| Վահան » Խոյեան                    | Տօթ. Նաղարէթ » Տաղաւարեան    |
| Տրդատ » Պօյաճեան                  | Տօթ. Վահրամ » Թորգոմեան      |

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆԸ

| ՈՒՍՈՒՄՆԱԿՆ ԽՈՐՀՈՒՐԴ              | ՎԱՆՕՐԷՑԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ<br>(Կազմուած չէ)                                      |
|----------------------------------|--------------------------------------------------------------------------|
| 1 Արիսակէս էֆ. Դասպարեան Ասեմապե |                                                                          |
| 2 Դրիգոր » Իմաստեան Ասեմապի      |                                                                          |
| 3 Դաւուս » Մալաթեան (Հրաթ.)      |                                                                          |
| 4 Տօթ.Եղուարդ » Մասիս            |                                                                          |
| 5 Մկրտիչ » Նորիկեան              |                                                                          |
| 6 Յակոբ » Նիկոդոսեան             |                                                                          |
| 7 Պէտրոս » Դարաւեան              |                                                                          |
| ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ               | ԿՏԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ                                                    |
| 1 Դաւուս էֆ. Դուրումեան Ասեմապե  | 1 Մաղաֆիա Եպիսկ. Տերունեան Ասեմապե                                       |
| 2 Անտոն » Թեքեան Ասեմապի         | 2 Կարապետ էֆ. Այնեան Ասեմապի                                             |
| 3 Արամ » Թահթաւեան               | 3 Ղեւոնդ Մ.Վրդ. Դուրեան                                                  |
| 4 Եղուարդ » Շիրիկեան             | 4 Միֆայիլ Բահ. Աշտեան                                                    |
| 5 Միքայ » Մսերեան                | 5 Նշան էֆ. Սեփանեան                                                      |
| 6 Լեւոն » Տեմիրճիպաշեան          | 6 Վահան » Սուրենեան                                                      |
| 7                                | 7 Յովհաննէս » Խաչատուրեան                                                |
| ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ            | ԱԶԳ. ՀԻՒԱՆԳԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ<br>(Վերջնական կազմակերպութիւն ստացած չէ) |
| 1 Յովհաննէս էֆ. Պառաւեան Ասեմապե |                                                                          |
| 2 Դրիգոր Բահ. Ճեպեան Ասեմապի     |                                                                          |
| 3 Եղիպսար » Պօղոսեան             |                                                                          |
| 4 Հմայեակ » Էնֆուրեան            |                                                                          |
| 5 Պէտրոս » Կարապետեան            |                                                                          |
| 6 Տօթ. Միսաֆ էֆ. Ճեպեան          |                                                                          |
| 7 Յովհաննէս » Մարգարեան          |                                                                          |
| 8                                |                                                                          |



ՅԱԻՆԼԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՆՎ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Դ. ՆԻՍՏ 1879 ԱՄԻ

ՅՕԴ. 6. — Ազգային ժողովն չորս անդամով Ելեմսից Յանձնախումբ մը կ'ընտրէ իւր մէջէն, որ ազգային պիւսնէին մէջ Ազգ. ժողովոյ համար սահմանուած գումարը վարչութեան ընդունելով՝ կը հոգայ ժողովին տպագրական, կան կարասեաց եւ ուրիշ ամեն կարգի ծախքերը, եւ տարեգլխին՝ հաշիւը կը ներկայացնէ Ազգային ժողովին :

---

ԳԻՆ | ՂՐՈՒՇ

*Սեփականութիւն Ազգ. սնտուկին, Ազգ. ժողովոյ ծախուց յատկացեալ.*

---

*Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Դաշաթիոյ .*

---

Զ'կննուած օրինակները կեղծ ու անվաւեր են :